



DocuSigned by:
Artak Nahapetyan
F22E4DE502AE496...

<<ԷՔՈՒԻԹԻ ԷՅ ԷՄ>> ՓԲԸ

Փողերի լվացման դեմ պայքարի (ՓԼ/ԱՖ) Քաղաքականություն

<<Էքուիթի Էյ Էմ>> ՓԲԸ (<<Էքուիթի Էյ Էմ>>) ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից լիզենզավորված և կարգավորվող ընկերություն է և սույն փաստաթուղթը կազմված է ՀՀ օրենքների, ԿԲ կանոնների և պահանջներին համապատասխան: Սույն փաստաթուղթը <<Էքուիթի Էյ Էմ>> ՓԲԸ-ի սեփականություն է, որի բովանդակությունը խիստ գաղտնի է և Ընկերությունից դուրս տարածման ենթակա չէ: Սույն փաստաթղթի ցանկացած անձնական օրինակ պետք է վերադարձվի <<Էքուիթի Էյ Էմ>> ՓԲԸ-ին՝ աշխատանքային հարաբերությունների դադարման դեպքում:

equiti

Բովանդակություն

1.	Նախապատմությունը.....	4
2.	Քաղաքականության նպատակը	4
3.	Կիրառման շրջանակը.....	5
4.	Ինչ է Փողերի լվացումը.....	6
4.1	Փողերի լվացման փուլերը.....	7
4.2	Ահաբեկչության ֆինանսավորումը	8
4.3	Չանգվածային ոչնչացման գեներալ տարածումը.....	9
4.4	Փողերի լվացման հանցագործությունները և պատիժները	9
4.5	Փողերը լվացողին աջակցելը	10
4.6	Կանխամտածված անտեսումը (Wilful Blindness).....	10
4.7	Կասկածների մասին չհայտնելը.....	10
4.8	<<Կասկածների չբացահայտումը>> (“Tipping Off”).....	11
5.	Չարկերից խուսափելը	11
6.	Ռիսկերի վրա հիմնված մոտեցումը	11
7.	Կասկածելի գործողությունները (Կարմիր Դրոշակները)	13
8.	Փողերի լվացման հաշվետվության պատասխանատուն (ՓԼՉՊ-MLRO)	14
9.	Տեղեկատվության փոխանակումը	15
10.	Էքզիզի էյ Էմ-ի փողերի լվացման դեմ պայքարի հիմնական սկզբունքները.....	16
10.1	Աշխատակիցների թրեյնինգը և ՓԼ դեմ պայքարի մասին իրազեկվածությունը.....	16
10.2	Չաճախորդների նույնականացումը.....	16
10.2.1	Ճանաչիր քո աշխատակցին	16
10.3	Երկրի ռիսկի դասակարգումները.....	17
10.4	Բարձր ռիսկի հաճախորդների հատուկ տեսակները.....	18
10.5	Պատժամիջոցները ստուգելու մեր մոտեցումը	18
10.6	Չաճախորդի գործունեության մոնիտորինգը	19
10.7	Վճարումները.....	19
10.7.1	Երրորդ կողմի վճարումները.....	20
10.8	Կասկածելի արարքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելը.....	21
11.	Դերակատարումներն ու Պարտականությունները	21
12.	Թրեյնինգը.....	24

equiti

13. Տեղեկատվության պահպանումը	25
14. Քաղաքականության վերանայումը և հաստատումը.....	25
15. Խախտման հետևանքները.....	26

eQUITI

1. Նախապատմությունը

Էքուիթի Էյ ԷՄ ՓԲԸ («Էքուիթի Էյ ԷՄ») ներդրումային ընկերություն է, որը «Արժեթղթերի շուկային մասին» ՀՀ օրենքի հիման վրա տրված լիցենզիայի համաձայն իր հաճախորդներին տրամադրում է արտարժույթի փոխանակման (ֆորեքսի) և ածանցյալ գործիքներով գործարքների կատարման ոչ առերես ծառայություններ, որում հիմնական ներդրումները կամ պրոդուկտները են՝ արտարժույթի փոխանակման պայմանագրերը, թանկարժեք մետաղները, արժեթղթերի ինդեքսները և ածանցյալ պայմանագրերը:

Էքուիթի Էյ ԷՄ իր պրոդուկտներն առաջարկում է միայն ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխանող պրոֆեսիոնալ հաճախորդներին և շուկայի գործընկերներին:

<<Պրոֆեսիոնալ հաճախորդ>> այն հաճախորդ է, որն ունի համապատասխան փորձ և գիտելիք ինքնուրույն ներդրումային որոշումներ կայացնելու և դրանցից բխող ռիսկերը գնահատելու համար: Պրոֆեսիոնալ հաճախորդներ համարվելու մանրամասն չափանիշները սահմանված են ՀՀ Կենտրոնական բանկի 4/07 կանոնակարգի 3.1-րդ գլխում:

<<Շուկայի գործընկերները>> այն ընկերություն է, որը համագործակցում է առցանց առևտրային հարթակում (Էլեկտրոնային հաղորդակցման համակարգեր, տերմինալներ և այլ ծրագրեր) ներդրումային ծառայություններ մատուցող կազմակերպության հետ, նրանց միջոցով կնքելով լեվերիջով գործարքներ, այդ թվում ներդրումային ծառայություններ մատուցող կազմակերպության հաճախորդների հետ կնքելով Ֆորեքս գործարքներ:

- Էքուիթի Էյ ԷՄ նախաձեռնում է հարաբերություններ հաստատել առցանց դիմումներ լրացրած հաճախորդների հետ, ինչն անհրաժեշտ է ամբողջությամբ լրացնել՝ հաշիվ բացելու գործընթաց սկսելու համար:
- «Փողերի լվացման» վերաբերյալ բոլոր հղումներում, եթե այլ բան սահմանված չէ, պետք է համարվի ներառված «սահաբեկչության ֆինանսավորումը», ինչպես նաև «զանգվածային ոչնչացման զենքի տարածումը»:

2. Քաղաքականության նպատակը

- Համապատասխան օրենքների և կարգավորումների համաձայն, Էքուիթի Էյ ԷՄ-ը պարտավոր է ընդունել փողերի լվացման կանախարգելմանն ուղղված համարժեք ու համապատասխան քաղաքականություններ ու ընթացակարգեր: Սույն Քաղաքականությունը սահմանում է Ընկերության՝ Փողերի Լվացման (ՓԼ), Ահաբեկչության

equiti

Ֆինանսավորման (ԱՖ) և Չանգվածային Ոչնչացման Չենքի Տարածման (ՉՈՉՏ) դեմ պայքարում ստանձնած փիլիսոփայությունն ու մոտեցումը: Այն կոչված է ապահովել, որպեսզի ընկերությունը, նրա ավագ ղեկավարությունն ու աշխատակիցները ձեռնարկեն համապատասխան միջոցներ ֆինանսական հանցագործությունների կանխելու, դրանց բացահայտելուն նպաստելու և այդպիսի նախադեպերն ուսումնասիրելու ուղղությամբ: Այն իրականացվում է մի շարք հիմնական սկզբունքների սահմանելու միջոցով, որոնք ապահովում են Էթիկի Եյ Էմ-ի համապատասխանությունը ՀՀ գործող օրենքներին և կարգավորումներին, ինչպես նաև միջազգային ստանդարտներին:

- Այսպիսով, սույն քաղաքականության նպատակն է՝
ա/ մեղմել կամ կանխել՝ Էթիկի Եյ Էմ-ին փողերի լվացման մեջ օգտագործելու հնարավոր սցենարները,

բ/ Էթիկի Եյ Էմ-ին հնարավորություն տալ հաստատել և գործարկել՝ Օրենքների, կարգավորումների և առողջ գործարար սովորույթներին համահունչ կառուցակարգ,

գ/ ապահովել աշխատակիցների իրազեկվածությունը՝ ՓԼ դեմ պայքարում իրենց պարտականությունների մասին:

- Սույն քաղաքականության ընդհանուր իրականացման առաջնային պատասխանատուն Էթիկի Եյ Էմ-ի Տնօրենների խորհուրդն է (կամ Գործադիր տնօրենը՝ տնօրենների խորհրդի բացակայության դեպքում)՝ փողերի լվացման հաշվետվության պատասխանատուի (ՓԼՀՊ) և համապատասխանության դեպարտամենտի առաջարկությամբ.
- Էթիկի Եյ Էմ-ին աջակցություն կամ ծառայություններ մատուցող ընկերության բոլոր աշխատակիցներ, նույնպես պարտավոր են համապատասխանել սույն քաղաքականությանը: Սույն քաղաքականությանը չհամապատասխանելու դեպքում տվյալ ընկերությունը կամ աշխատակիցները կարող են ենթարկվել քրեական, քաղաքացիական կամ կարգավորողի կողմից այլ պատիժների: Այն կարող է նվազագույնը դիտվել որպես Էթիկի Եյ Էմ-ի աշխատանքային պայմանագրի շրջանակում վարքագծի կանոնի խախտում:

3. Կիրառման շրջանակը

- Սույն քաղաքականությունը տարածվում է Էթիկի Եյ Էմ-ի ողջ անձնակազմի, ինչպես նաև Ընկերության անունից գործառույթներ իրականացնող բոլոր ներկայացուցիչների վրա (օրինակ՝ արտերկրում հաճախորդների սպասարկման ծառայությունների իրականացում): Փողերի լվացողների կողմից Էթիկի Եյ Էմ-ին կամ նրա հաճախորդներին օգտագործելուց

equiti

պաշտպանելը բոլոր աշխատակիցների պարտականություն է: Յուրաքանչյուր ոք պետք է զգուշություն և զգոնություն ցուցաբերի հավանական նոր հաճախորդներին գնահատելիս, ինչպես նաև հաճախորդների պահանջները լուծելիս և գործարքները կատարելիս:

Սույն քաղաքականությամբ և դրա հետ կապված ընթացակարգերով սահմանված դրույթների համաձայն ողջ գործող անձնակազմը պետք է՝ հաշիվների, գործարքների, անձնակազմի կամ գործունեության վերաբերյալ ունեցած կասկածների մասին ժամանակին տեղեկացնի էբուիթի էյ էմ-ի ՓԼՅՊ-ին: Բոլոր աշխատակիցները պետք է կարդան և կիրառեն սույն Քաղաքականությունը և դրա հետ կապված ընթացակարգերը:

- Այսպիսով, սույն քաղաքականությունը տարածվում է՝
ա/ էբուիթի էյ էմ-ի և իր տնօրենների, աշխատակիցների, գործակալների, կապալառուների, ենթակապալառուների ու խորհրդատուների նկատմամբ,

բ/ Բոլոր այլ կազմակերպությունների որոնք էբուիթի էյ էմ-ի անունից իրականացնում են՝ ՀՀ ԿԲ-ի կողմից կարգավորվող գործունեություն, ինչպես նաև նրանց տնօրենների, աշխատակիցների, գործակալների, կապալառուների, ենթակապալառուների ու խորհրդատուների նկատմամբ:

4. Ինչ է Փողերի լվացումը

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, փողերի լվացում են համարվում հետևյալ արարքների կատարումը՝

- գույքի փոխարկումը (կոնվերտացումը) կամ փոխանցումը, եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում՝ նպատակ ունենալով թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի ապօրինի ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից,
- թաքցնել կամ խեղաթյուրել գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, դրա հետ կապված իրավունքները կամ պատկանելիությունը, եթե հայտնի է, որ այդ գույքը ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում,
- գույքը ձեռք բերելը կամ տիրապետելը կամ օգտագործելը կամ տնօրինելը, եթե այդ գույքի ստացման պահին հայտնի էր, որ այն ստացվել է հանցավոր գործունեության արդյունքում:

Ֆինանսական հաստատությունները կարող են օգտագործվել փողերի լվացման նպատակով, ուստի տվյալ ոլորտի աշխատակիցները պարտավոր են տեղյակ լինեն՝ ինչպես ընկերության համար որտեղ աշխատում են, այնպես էլ իրենց համար որպես աշխատակցի վրա տարածվող կարգավորման պահանջներին:

equiti

Ընկերությունը պետք է տեղյակ լինի փողերի լվացման դեմ պայքարին վերաբերյալ Հայաստանում գործող հետևյալ օրենսդրությանը և միջազգային չափորոշիչներին՝

- 1) <<Փողերի լվացման դեմ պայքարի մասին>> ՀՀ օրենք,
- 2) ՀՀ քրեական օրենսգիրք,
- 3) ՀՀ ԿԲ-ի կանոնակարգ <<Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների մասին>>,
- 4) ՖԱԹՖ-ի 40 Հանձնարարականներ:

4.1 Փողերի լվացման փուլերը

Փողերի լվացումը ենթադրում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների ստացում և դրանց ապօրինի ծագման թաքցնել՝ հանցագործությամբ ստացված հասույթը վերջնականապես՝ օրինական և անօրինական գործողությունների կատարելու համար օգտագործելու ակնկալիքով: Ըստ եռության, այն ապօրինի ճանապարհով ստացված <<կեղտոտ փողերի>> փոխակերպումն է <<մաքուր փողերի>>՝ մի շարք գործարքների կատարելու միջոցով՝ դրանց իրական ծագումը թաքցնելու նպատակով: Փողերի լվացման գործընթացը, որպես կանոն, բաղկացած է երեք փուլերից՝ տեղաբաշխում, շերտավորում և ինտեգրում:

- 1) **Տեղաբաշխում (placement)** - փողերի լվացման գործընթացի սկզբնական փուլն է, որը կատարվում է անօրինական կանխիկ կամ այլ միջոցների ֆինանսական համակարգ ֆիզիկապես մուտք անելով (օրինակ՝ բանկային հաշվին կանխիկ գումար դեպոզիտացնել): Բանի որ, էքուիթի էջ էմ-ը չի ընդունում կանխիկ գումարներ, այս փուլում այն հարաբեկանորեն նվազ զգայուն է:
- 2) **Շերտավորում (Layering)** – ապօրինի ճանապարհով ստացված եկամուտների առանձնացումն է իրենց աղբյուրներից ֆինանսական գործարքներում շերտեր ավելացնելով՝ նպատակ ունենալով թաքցնել եկամտի աղբյուրը: Այն ներառում է ֆինանսական գործարքների այնպիսի բարդ շերտեր, որոնք թաքցնում են միջոցների հետքերը, ծագման աղբյուրը և տիրապետողներին:

Օրինակ՝

- Վաճառել մեկ ներդրումը և վերաներդնել այն մեկ ուրիշում,
- Տեղաշարժել գումարը տարբեր հաստատությունների կամ իրավակարգավորումների միջև, և
- Ստեղծել այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են ընկերությունները և տրաստները՝ ակտիվների սեփականատերերի ակնհայտ փոփոխություն կատարելու նպատակով:

Նկատենք, որ հաշիվների ոչ առերես ձևով համալրման և դուրս բերման

equiti

հնարավորություններն այս փուլում էթուիթի էյ Էմ-ին դարձնում են ավելի զգայուն:

- 3) **Ինտեգրում (integration)** – եզրափակիչ փուլն է, որը ենթադրում է լվացված եկամուտների օգտագործում թվացյալ նորմալ համարվող գործարքներում՝ օրինականության ընկալում ստեղծելու համար: Ըստ էության, այն իրենում ներառում է միջոցների վերադարձ տնտեսություն՝ օրինական բիզնեսի կամ անձնական գործարքների տպավորություն ստեղծելու համար:

4.2 Ահաբեկչության ֆինանսավորումը

Ահաբեկչությունը կարող է սահմանվել, որպես <<այնպիսի գործողություն կամ սպառնալիքն որն ուղղված է կառավարության վրա ներգործելու կամ հանրությանը ահաբեկելու կամ բաղաբական, կրոնական կամ գաղափարական հայացքներն առաջ մղելուն >>, որը կատարվել է՝

- Անձի նկատմամբ բռնություն գործադրելու,
- Գույքը վնասելու,
- Հանրային առողջության կամ անվտանգությանը լրջագույն վտանգելու,
- Էլեկտրոնային համակարգին միջամտելու միջոցով:

Ահաբեկչության ֆինանսավորումը՝ ֆինանսական միջոցների և հաստատությունների ներգրավում, տեղափոխում, պահպանում և օգտագործումն է՝ ահաբեկչական գործողությունները ֆինանսավորելու նպատակով: Այն հաճախ օգտագործվում է փողերի լվացման հասկացության հետ համատեղ, բայց դրանց միջև գոյություն ունեն էական տարբերություն.

- Հաճախ առանձին ահաբեկչական գործողություն կատարելու համար պահանջվում է միայն փոքր չափի գումարներ, որն էապես դժվարեցնում է ահաբեկիչների գույքի որոնումը,
- Ահաբեկիչները կարող են ֆինանսավորվել, այդ թվում օրինական աղբյուրներից ստացված միջոցներից, ներառյալ բարեգործական նվիրատվություններից, ինչը էապես դժվարեցնում է բացահայտել այն պահը, երբ օրինական միջոցները դառնում են ահաբեկիչների սեփականություն:

Այնուամենայնիվ, նույնքան կարևոր է նշել, որ ահաբեկիչները հաճախ օգտագործում են միևնույն մարտավարությունը, ինչպես փողերի լվացողները, հետևաբար, ահաբեկչության ֆինանսավորումը կարող է հաճախ բացահայտվել օգտագործելով այդ նույն՝ փողերի լվացման բացահայտման ժամանակ կիրառվող մեթոդները:

Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարում, էթուիթի էյ Էմ-ի պարտականություն է կասկածելի արարքների մասին հաշվետվություն ներկայացնել իրավասու մարմիններին: Այն ահաբեկչության ֆինանսավորման բացահայտման հետ կապված իրավապահ մարմիններին աջակցություն է՝ հնարավորություն տալով սառեցնել այն գույքը, եթե առկա է ողջամիտ հիմքեր

equiti

կասկածելու, որ այն կարող է օգտագործված լինել ահաբեկչական արարքների ֆինանսավորման համար:

Ընկերությունների վրա օրենսդրությամբ դրված են միևնույն պարտականություններն ու պատասխանատվությունը, երբ նրանք իմացել են կամ կասկածներ ունեն ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված:

4.3 Չանգվածային ոչնչացման զենքի տարածումը

Չանգվածային ոչնչացման զենքի տարածումը ներառում է քիմիական, կենսաբանական, կամ միջուկային զենքերի մշակումը, վաճառքը, ձեռք բերումը կամ իրացումը, ինչպես նաև քիմիական, կենսաբանական և միջուկային նյութերի օգտագործումը՝ նմանատիպ զենքերի արտադրության համար:

Չանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարում, Էքուիթի Էյ Էմ-ի պարտականություն է հաճախորդների և գործընկերների նկատմամբ կիրառել համապատասխան ճԶՈ և ԶՊՈԻ գործընթացներ՝ հնարավոր ՉՈԶ-ի վաճառողներին և գնորդներին բացահայտելու և կասկածելի արարքների վերաբերյալ իրավասու մարմիններին հաշվետվություն ներկայացնելու համար: Այն զանգվածային ոչնչացման զենքի տարածման բացահայտման հետ կապված իրավապահ մարմիններին աջակցություն է՝ հնարավորություն տալով ձեռքարկել կասկածյալին և ստեղծել նրա միջոցները, եթե առկա են բավարար հիմքեր կասկածելու, որ տվյալ անձը կամ գույքը կարող էին կապված լինել ՉՈԶ-ի տարածման հետ:

Ընկերությունների վրա օրենսդրությամբ դրված է միևնույն պարտականություններն ու պատասխանատվությունը, երբ նրանք իմացել են կամ կասկածներ ունեն զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված:

4.4 Փողերի լվացման հանցագործությունները և պատիժները

Ֆինանսական հաստատությունների աշխատակիցները ովքեր դիտավորյալ անտեսում են փողերի լվացման ազդակները կարող են պատժվել ազատազրկման կամ տուգանքի: Աշխատակիցները պետք է տեղյակ լինեն և պահպանեն Էքուիթի Էյ Էմ-ի ՓԼ դեմ պայքարի հետ կապված քաղաքականությունները և ընթացակարգերը (օրինակ՝ ԶՊՈԻ ընթացակարգերը), համոզվելու, որ իրենք ներգրավված կամ ներբաշխված չեն փողերի լվացման հանցագործության մեջ: Իրավախախտման հիմնական տեսակները և պատժաչափերը սահմանվում են ստորև՝ Չավելվածում:

equiti

4.5 Փողերը լվացողին աջակցելը

Որևէ արարքում գիտակցված ներգրավումը, որը կարող է դիտվել որպես փողերի լվացողին աջակցություն հանցագործություն է: Ընդհանուր առմամբ, փողերի լվացողին աջակցություն է համարվում՝

- Հանցավոր ճանապարհով ստացված գույքի ձեռք բերելը, օգտագործելը, տիրապետելը, կամ թաքցնելը, քողարկելը, փոխակերպելը, փոխանցելը, կամ
- Այնպիսի գործընթացներին մասնակցելը կամ ընդգրկվելը, երբ անձը գիտի, կամ կասկածում է, որ նպաստում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի ձեռք բերմանը, պահմանը, օգտագործմանը կամ վերահսկմանը:

Էբուլիթի Էյ Էմ-ում հաճախորդի միջոցները համալրելու, դրանք հաշիվներում պահելու, հաշիվների միջև փոխանցումներ կատարելու, միջոցները դուրս բերելու և առհասարակ հաճախորդի՝ առևտրային հարթակում գործարքներ կատարելու ողջ գործընթացը, ըստ էության, համապատասխան հազամանքներում, կարող է ընկալվել որպես փողերի լվացողին <<աջակցություն>>:

4.6 Կանխամտածված անտեսումը (Wilful Blindness)

<<Կանխամտածված անտեսումը>> իրավական սկզբունք է, որը գործում է փողերի լվացման դեպքերում և կարող սահմանվել, որպես <<փաստերի գիտակցելուց դիտավորյալ խուսափում>> կամ <<նպատակային անտարբերություն>>: Այլ կերպ, այն տեղի է ունենում, երբ աշխատողը տեղյակ է կամ գոյություն ունեցող տեղեկատվության համաձայն պարտավոր էր տեղյակ լինել, որ կատարվում է փողերի լվացում և ահաբեկչության ֆինանսավորում, բայց դիտավորյալ ատեսում է կամ արհամարում է այդ տեղեկությունը և հաշվետվություն չի ներկայացնում արարքի մասին: Այն կարելի է անվանել նաև որպես <<աչք փակել>>: Կանխամտածված անտեսումը հուսալի պաշտպանության միջոց չէ և շատ երկրների, այդ թվում Հայաստանյան իրավակարգավորումներում, կանխամտածված անտեսումը կարող է առաջացնել քրեական կամ քաղաքացիական պատիժների՝ այդպիսի արարքներ թույլ տալու համար:

4.7 Կասկածների մասին չհայտնելը

Եթե որևէ աշխատակից տեղյակ է կամ ունի բավարար հիմքեր՝ տեղյակ լինելու կամ կասկածելու, որ Էբուլիթի Էյ Էմ-ը օգտագործվել է կամ օգտագործվում փողերի լվացման կամ հետագայում ֆինանսական հանցագործության կատարման նպատակով և այդ կասկածների մասին հաշվետվություն չի ներկայացրել իր անմիջական ղեկավարին կամ Համապատասխանության դեպարտամենտին, հանցագործություն է: Այն դեպքում, երբ աշխատողը կասկածում է

equiti

հաճախորդի գործունեությունը, ապա այդ մասին պարտավոր է անմիջապես տեղեկացնել իր անմիջական ղեկավարին կամ Համապատասխանության դեպարտամենտին:

4.8 <<Կասկածների չբացահայտումը>> (“Tipping Off”)

<<Կասկածների չբացահայտումը>> կասկածի մասին անձին ոչ պատշաճ և ապօրինի ծանուցումն է առ այն, որ իր վերաբերյալ կազմվում է կասկածելի գործունեության վերաբերյալ հաշվետվություն կամ այլ կերպ, որ իր նկատմամբ իրավասու մարմինն իրականացնում է հետաքննություն կամ հետապնդում: Այն, ըստ էության, ենթադրում է <<անձանց ահազանգել՝ իրենց նկատմամբ հետաքննություն սկսելու կամ կատարելու մասին>> կամ <<թաքցնել, ոչնչացնել կամ կեղծել համապատասխան փաստաթղթերը>>: Իրավական պաշտպանության է ենթարկվում միայն այն անձը, ով, ըստ էության, վնասել է քննությանը, սակայն «չի գիտակցել կամ չի կասկածել, որ այդպիսի բացահայտումը կարող էր վնասել քննությանը»:

<<Կասկածների չբացահայտման>> ռիսկերը կառավարելու համար, Էքուիթի Էյ Էմ-ը կարող է չիրականացնել հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն, բացառությամբ նույնականացման և ինքնության ստուգման, եթե առկա են կասկածներ փողերի լվացման վերաբերյալ, և ՓԼՀՊ ողջամտորեն կարծում է, որ հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելը կհանգեցնի հաճախորդին իր կասկածների բացահայտմանը: Այդ դեպքում, ՓԼՀՊ սահմանված կարգով կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ սահմանված կարգով հաշվետվություն է տրամադրում ՀՀ ԿԲ-ի Ֆինանսական դիտարկումների կենտրոնին (ՖԴԿ):

5. Հարկերից խուսափելը

Հարկերից խուսափելը՝ փողերի լվացմանը նախորդող հանցագործություն է: Անօրինական գործունեություն է, երբ գրանցված ընկերությունները կամ անձինք հարկային մարմիններին դիտավորյալ չեն ներկայացնում, թաքցնում կամ խեղաթյուրում են իրենց իրական գործունեությունը՝ նպատակ ունենալով նվազեցնել հարկային պարտավորությունները՝ ներառյալ ոչ ճիշտ հարկային հաշվետվություն ներկայացնելու, ինչպիսիք են նվազ եկամուտներ, շահույթներ կամ հասույթներ հայտարարագրելը քան իրականում է կամ նվազեցումները չափազանցնելու միջոցով: ՀՀ հարկային օրենսգրքի չհամապատասխանելու դեպքում, Ընկերությունը կարող է ենթարկվել տուգանքի կամ կարգավորողի կողմից այլ պատիժների, իսկ պատասխանատու պաշտոնատար անձինք կարող են ենթարկվել քրեական կամ այլ պատժի:

6. Ռիսկերի վրա հիմնված մոտեցումը

Չնայած կարգավորվող ընկերություններին թույլ չի տրվում շրջանցել հաճախորդների պատշաճ ուսումնասիրության կատարումից, այդուհանդերձ ՀՀ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրությունը՝

equiti

ընկերություններին հնարավորություն է տալիս կիրառել ռիսկերի վրա հիմնված մոտեցում հաճախորդների հետ գործարքներ կատարելիս և վտանգավորության աստիճանին բնորոշ ռիսկերը հստակեցնելու համար:

Էքուիթի Էյ Էմ-ի ՓԼ/ԱՖ ռիսկերը տարբեր են՝ ըստ հաճախորդների տեսակների, իրավակարգավորումների, պրոդուկտների և մատակարարման եղանակների: Բոլոր աշխատակիցները պետք է գիտակցեն Ընկերության պրոդուկտի բնույթը, որը հասանելի է և տարբեր, այդ թվում գլոբալ հաճախորդներին 24 ժամ/7 օր տևողությամբ, ոչ առերես շփմամբ վաճառքի ենթակա, ինչը նշանակում է, որ այլ ճյուղերի համեմատ, Էքուիթի Էյ Էմ-ն ունի ՓԼ/ԱՖ ավելի բարձր ռիսկ: Ոլորտի լավագույն փորձի հիման վրա, Էքուիթի Էյ Էմ-ը՝ ՓԼ դեմ պայքարում կիրառում է ռիսկերի վրա հիմնված մոտեցում, որը հաստատվում ու լիովին աջակցություն է գտնում Տնօրենների խորհրդի (կամ տնօրենների խորհրդի բացակայության դեպքում գործադիր տնօրենի) կողմից և այն համարժեք է Էքուիթի Էյ Էմ-ի բիզնեսի բնույթին, ծավալներին և բարդությանը:

Գործնական հարթությունում ռիսկերի վրա հիմնված մոտեցումը ապահովում է, որ

- 1) Մինչև Ընկերության հետ գործարար հարաբերություն հաստատելը, յուրաքանչյուր հաճախորդի ինքնություն պատշաճ ձևով ստուգվում է,
- 2) Բավարար չափով տեղեկություններ է հավաքվում ու պահվում, ինչն Էքուիթի Էյ Էմ-ին հնարավորություն է տալիս <<ճանաչել իր հաճախորդին>> և բացահայտել անսովոր արարքները,
- 3) Հավելյալ պատշաճ ուսումնասիրություն և մոնիտորինգի միջոցառումներ են իրականացվում, որոնք համարժեքորեն աճում են հաճախորդի հաստատված ռիսկին համապատասխան,
- 4) Այն հավանական հաճախորդների հետ հարաբերությունները, որոնք կրում են չափազանց բարձր աստիճանի ՓԼ/ԱՖ ռիսկ, մերժվում են,
- 5) Հաստատված գործարար հարաբերությունները դիտարկվում են համապատասխանաբար և Ընկերության ՓԼ/ԱՖ ռիսկին համարժեք,
- 6) Եկամուտների աղբյուրի ստուգում կարող է կատարվել առավել բարձր ռիսկայնություն ունեցող հաճախորդների կամ որոշ բարձր ռիսկային իրավիճակների դեպքում և
- 7) Որպես ընդհանուր սկզբունք, Էքուիթի Էյ Էմ-ը կիրառում է <<վերադարձ աղբյուրին>> քաղաքականությունը՝ հաճախորդի միջոցների դուրս բերելու պահանջների համար:

Վերոնշյալ միջոցառումների չիրականացնելը կամ ոչ բավարար չափով իրականացնելը, Էքուիթի Էյ Էմ-ի համար առաջացնում է կարգավորման, իրավական, հեղինակության և գործառնական բնույթի ռիսկեր, հանգեցնելով կարգավորողի ներգործությանը կամ դատական հայցերի:

eQUITI

7. Կասկածելի գործողությունները (Կարմիր Դրոշակները)

Էթոկիթի Էյ Էմ-ի առավել ռիսկային Է հատկապես շերտավորում փուլում, չնայած նրան, որ աշխատողները պետք է ուշադիր լինեն հաճախորդի կողմից դրսևորվող ցանկացած կասկածելի վարքագծի նկատմամբ: Օրինակ՝

- փորձում է կանխիկ գումարներ մուտք անել իր հաշիվներ,
- գումարներ Է մուտք անում իր հաշիվներ՝ միայն հաշիվներից, հետագայում՝ առանց առևտրային հարթակում գործարք անելու դրանք դուրս բերելու նպատակով,
- կատարվում Է հաշիվների համալրում, որոնք Էականորեն գերազանցում են՝ առևտրային հարթակում գործարք անելու համար հաճախորդների կողմից իրենց դիմումներում նշված գումարների մոտավոր չափերը,
- առևտրային հարթակում գործարքներ են կատարվում՝ առանց գործարքների հետ կապված ծախսերին ուշադրություն դարձնելու,
- չափից ավելի օգտագործվում են բարդ կորպորատիվ մեխանիզմներ,
- գործարքների վճարման համար նախատեսված միջոցները բխում են արտասովոր աղբյուրներից,
- հաճախորդն անսովոր մտահոգություն Է դրսևորում, մասնավորապես՝ անձնական տվյալների, գործունեության տեսակի կամ ունեցվածքի աղբյուրների վերաբերյալ գաղտնիություն ապահովելու առումով,
- հաճախորդն, ընդհանուր առմամբ, բավարար չափով տեղեկացված չէ իր առևտրային գործունեության մասին,
- հաճախորդը որևէ հետաքրքրություն կամ շահագրգռվածություն չի ցուցաբերում առևտրային հարթակում գործարքների հետ կապված ռիսկերի, միջնորդավճարների չափերի և ծառայությունների հետ կապված առաջարկվող այլ սակագների նկատմամբ,
- հաճախորդը հանդես Է գալիս որպես գործակալ այլ միավորի կամ անհատի անունից, սակայն խուսափում Է բացահայտել այդ անձանց տվյալները (բացառությամբ՝ օրենքով նախատեսված որոշ դեպքերի, որոնք կապված են առևտրային գաղտնիքի հետ),
- հաճախորդն այն երկրից Է (տարածքից) կամ այն երկրում Է (տարածքում) հաշիվ բացել, կամ այն երկրում (տարածքում) ունի կենսական շահերի կենտրոն, որոնք, միջազգային ընդունված ստանդարտների համաձայն, համարվում են փողերի լվացման կամ թմրամիջոցների շրջանառության դեմ պայքարի տեսանկյունից չհամապատասխանող կամ լուրջ թերություններ ունեցող, ինչպես նաև <<հարկային դրախտ>> գնահատվող օձշորային սահմանված տարածքներ,
- հաճախորդը կատարում Է անսովոր մեծ չափի, անսպասելի կամ անբացատրելի դրամային փոխանցումներ, (հատկապես բանկային փոխանցումներ, ներառյալ նաև այն երկրներ, որոնք ունեն բանկային գաղտնիքի մասին օրենսդրություն),

equiti

- հաճախորդն իր հաշվին համալրում կատարում է այն պահանջի ներկայացմամբ, որ մուտքագրված դրամային փոխանցումները հետագայում դուրս բերվեն կամ փոխանցվեն երրորդ անձի կամ այլ ընկերություն՝ չունենալով գործարար հարաբերություն հաստատելու նպատակ,
- հաճախորդն իր հաշիվների համալրումը կատարում է երրորդ անձի հաշիվների միջոցով,
- հաճախորդն իր բանկային հաշիվների փոխարեն պնդում է օգտագործել այլ միջոցներ,
- հաճախորդը հաշիվներ է բացում այնպիսի բանկերում, որոնք ունեն բացասական վարկանիշ կամ գտնվում են այնպիսի իրավակարգավորման ներքո, որոնք ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից համարվում են չհամապատասխանող կամ լուրջ թերություններ ունեցող (բարձր ռիսկայնությամբ գնահատվող),
- հաճախորդի՝ առևտրային հարթակում գործարք կատարելու եղանակները և ձևերը չեն համապատասխանում դիմումում առևտրային հարթակում գործարքներ կատարելու իր նշած փորձին:

8. Փողերի լվացման հաշվետվության պատասխանատուն (ՓԼՅՊ-MLRO)

Փողերի լվացման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն, բոլոր կարգավորվող ընկերությունները պարտավոր են 1) նշանակել անձին որպես ՓԼՅՊ՝ փողերի լվացման դեմ պայքարի մասին ՀՀ ԿԲ կանոններին Ընկերության համապատասխանությունը վերահսկելու պարտավորությամբ, և 2) ապահովել, որպեսզի ՓԼՅՊ-ն Ընկերությունում ունենա անհրաժեշտ աստիճանի անկախություն, և իր պարտավորությունները կատարելու համար բավարար միջոցներ, ինչպես նաև տեղեկատվությանը հասանելիություն:

ՀՀ ԿԲ-ի համար ՓԼՅՊ ընդունվում է որպես փողերի լվացման դեմ պայքարի հետ կապված բոլոր գործողություններում, Էքզիթի Էյ Էմ-ի կոնտակտային անձ: ՓԼՅՊ-ի խնդիրն է ընկերությունում ապահովել հսկողական այնպիսի համակարգերի գործադրումը, որոնք այլ միջոցների հետ միասին, համապատասխան տեղեկություն կտրամադրեն ղեկավար մարմինն և ավագ ղեկավարությանը, ներառյալ ՓԼՅՊ-ի տարեկան հաշվետվությունը՝ հսկողական համակարգերի գործարկման և արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև բոլոր աշխատակիցների համար փողերի լվացման հետ կապված թեմաներով համապատասխան թրեյնինգների անցկացման հարցերը:

Այդպիսի թրեյնինգները պետք է ընդգրկեն կասկածելի արարքների մասին հաշվետվություն ներկայացնելու համար անհրաժեշտ այնպիսի հարցեր, որոնց բիզնեսն առնչվում է իր ամենօրյա գործունեությունում: Յուրաքանչյուր կասկածի մասին պետք է տեղեկացնել ՓԼՅՊ-ին կամ Համապատասխանության թիմին, որոնց վերապահված են ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարի գործառնական գործառույթներ:

equiti

Օրենքի համաձայն ՓԼՀՊ-ի պարտականություն է ուսումնասիրել բոլոր կասկածները և որոշել՝ արդյոք հաշվետվություններն ուսումնասիրող համապատասխան լիազոր մարմինն՝ ՀՀ ԿԲ-ի ֆինանսական դիտարկման կենտրոնին (ՖԴԿ), հաշվետվություն ներկայացվում է թե ոչ:

9. Տեղեկատվության փոխանակումը

Էբուիթի Էյ Էմ-ը պարտավոր է իրականացնել իմբի քաղաքականությունները և ընթացակարգերը, ներառյալ՝ տվյալների պաշտպանության, ՓԼ/ԱՖ կանխարգելման նպատակով խմբում տեղեկությունների փոխանակման և այլ քաղաքականություններ ու ընթացակարգերը:

Այս տեսանկյունից, Էբուիթի Էյ Էմ-ը ձեռնարկում է մի շարք միջոցներ խմբի ներսում տեղեկությունների փոխանակման համար՝

ա/ անհրաժեշտության դեպքում հարցում է ուղարկում խմբի մեկ այլ ընկերությանը՝ հաճախորդների տվյալների, գործունեության բնույթի, գործարքների, ինչպես նաև վերաբերելի այլ տեղեկություններ ստանալու համար,

բ/ պատշաճ ձևով կազմում է՝ մերժված հայտատուների, ինչպես նաև այն հաճախորդների ցանկը, որոնց հետ գործարար հարաբերությունները կասեցվել կամ դադարեցվել են և այդ ցուցակները փոխանակում խմբի ընկերությունների միջև:

Այս քաղաքականությունները և ընթացակարգերը կիրառվում են ինչպես Հայաստանում, այնպես էլ խմբի կողմից վերահսկվող այլ երկրներում գտնվող դուստր ընկերություններում իրականացվող ՓԼ դեմ պայթարի գլոբալ քաղաքականության բաղկացուցիչ մաս: Այն կիրառվում է խմբի ընկերությունների շրջանում շատ տարբեր ստանդարտներ կիրառելուց խուսափելու նպատակով:

Տեղեկատվության փոխանակման հետ կապված ցանկացած հարցում, առաջներթության կարգով պետք է ուղղել համապատասխանության դեպարտամենտին:

Խմբի ընկերությունների միջև լիարժեք համագործակցություն և տեղեկատվության փոխանակում իրականացվում է այնքանով որքանով այն չի խախտում հաճախորդի գաղտնիությունը և տվյալ տեղում գործող օրենսդրական սահմանափակումները (գաղտնիության մասին օրենքներ):

eQUITI

10. Էքուիթի Եյ Էմ-ի փողերի լվացման դեմ պայքարի հիմնական սկզբունքները

10.1 Աշխատակիցների թրեյնինգը և ՓԼ դեմ պայքարի մասին իրազեկվածությունը

Էքուիթի Եյ Էմ-ի Տնօրենների խորհուրդը (կամ գործադիր տնօրենը՝ տնօրենների խորհրդի բացակայության դեպքում) պարտավորվում է ապահովել որպեսզի իր աշխատակիցներն առնվազն տարեկան առցանց, իսկ առանձին դեպքերում, նաև անհատական կարգով անցնեն ֆինանսական հանցագործությունների վերաբերյալ թրեյնինգներ: Նախատեսված ժամկետում թրեյնինգ չանցնելը գնահատվում է որպես բարեվարքության կանոնի հարց, որի մասին տեղեկացվում է ավագ ղեկավարությանը:

10.2 Հաճախորդների նույնականացումը

Ավելի հայտ է, որ հաճախորդների նույնականացումը՝ փողերի լվացման արարքների մեջ ներթաշվելուց կազմակերպությանը պաշտպանող առաջնային միջոցներից է: Էքուիթի Եյ Էմ-ի պարտավորությունն է մինչև հաճախորդի հետ հարաբերությունների հաստատումը պարզել՝ թե ովքեր են մեր հաճախորդները, որտեղ և ինչպիսի գործունեություն են նրանք իրականացնում, նրանց ակնկալիքները, և արդյոք հնարավոր է նրանք ներգրավված լինեն հանցավոր արարքների մեջ, թե ոչ: Բոլոր հաճախորդների հետ գործարար հարաբերություն պետք է հաստատվեն Հաճախորդների Պատշաճ Ուսումնասիրության (ՀՊՈԲ) ընթացակարգերին համապատասխան, որը հանդիսանում է ՓԼ դեմ պայքարի կառուցակարգի հիմնարար սկզբունքը: Այն սահմանում է նույնականացման և ստուգման այնպիսի պահանջներ որոնք պետք է պահել, մինչև Էքուիթի Եյ Էմ-ի կողմից հայտի հաստատելը և գործարար հարաբերություն սկսելը: ՀՊՈԲ ընթացակարգերում հաստատված ռիսկերի վրա հիմնված մոտեցման համաձայն՝ հաճախորդին ներգրավելու բպահանջները համարժեքորեն բարձրանում են փողերի լվացման հաստատված ռիսկին համահունչ:

10.2.1 Գնահատված թո աշխատակցին

Որպես համալրման և «Գնահատված թո Հաճախորդին» գործընթացի մաս, Ընկերությունը թեկնածուների հայտերը դիտարկելիս իրականացնում նրանց անձնային, մասնագիտական, դատվածության և ֆինանսական վիճակի վերաբերյալ ստուգում և պահանջում ինքնակենսագրական, ինչպես նաև անձնական/մասնագիտական որակների վերաբերյալ տեղեկություններ՝ շահերի բախման և փողերի լվացման մեջ նրանց առնչությունը գնահատելու համար: Լիարժեք համապատասխանություն ապահովելու համար, ընկերությունն ընդունում և

equiti

կիրառում է քաղաքականություններ և ընթացակարգեր, ներքին հսկողական միջոցներ, աշխատանքի նկարագրեր, բարեվարքության և էթիկայի կանոններ, անձնակազմի՝ օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության, հաշվետվողականության, մոնիտորինգի, կրկնակի հսկողության և այլ կանխարգելիչ միջոցներ:

Ընկերությունում կառավարիչները/ղեկավարները պետք է տեղեկացված լինեն իրենց անձնակազմի մասին, և հայտնել նրանց ֆինանսական վիճակում և ծախսային վիճակներում ցանկացած էական փոփոխության մասին: Միաժամանակ, Համապատասխանության դեպարտամենտը պետք է համոզված լինի, որ դիմորդի կամ աշխատակցի անունը չկա որևէ կիրառվող պատժամիջոցների, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց (ՔԱԱ) և/կամ <<Արգելված հաճախորդների>> ցանկերում: Ընկերության հաստիքացուցակում գտնվող յուրաքանչյուր անձ այդ ցուցակներով ենթարկվում է տարեկան ստուգման:

10.3 Երկրի ռիսկի դասակարգումները

ՀՊՈՒ Ընթացակարգերը օգտագործում է երկրի ռիսկի դասակարգիչը՝ նույնականացնելու այն հայտատուներին, ովքեր կրում են փողերի վճարման հավանական բարձր ռիսկ: Բոլոր դեպքերում, այն երկիրը որտեղ հաճախորդը բնակվում է կարող է ուղիղ ազդեցություն ունենալ դասակարգման վրա: Էքզիթիվ հաստատում է երկրի ռիսկը դասակարգման 5 չափանիշներ՝

- 1) Ցածր
- 2) Միջին
- 3) Բարձր
- 4) Առավել Բարձր
- 5) Արգելված

Երկրի ռիսկի դասակարգումները պարբերաբար վերանայվում են՝ նորությունների և միջազգային հեղինակավոր կառույցների՝ ինչպիսիք են օրինակ՝ ՖԱԹՖ-ի և Թրանսփարենսի ինթերնեյշնլի հրապարակումների համաձայն: Էքզիթիվ էյ Էմ չի ընդունում հաճախորդներ <<Արգելված>> երկրներից՝ ՓԼ/ԱՖ դեմ պայթարի չհամապատասխանող օրենսդրություն ունենալու կամ պատժամիջոցների տակ գտնվելու կամ դիվանագիտական հարաբերությունների բացակայության պատճառով:

Երկրների ցանկը՝ իրենց բնորոշ ռիսկերի դասակարգմամբ սահմանված է Երկրի Ռիսկերի Դասակարգումների աղյուսակում:

equiti

10.4 Բարձր ռիսկի հաճախորդների հատուկ տեսակները

Որոշ տեսակի հաճախորդներ դասակարգվում են ՓԼ/ԱՖ առավել բարձր ռիսկի քան մյուսները և հետևաբար, հավելյալ պատշաճ ուսումնասիրություն և մոնիտորինգ պետք է անցկացնել այդպիսի հաճախորդների նկատմամբ: Էբուրիթի Էյ Էմ-ը հետևյալ հաճախորդներին ճանաչում է հատկապես բարձր ռիսկի.

➤ **Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք**

Քաղաքական Ազդեցություն ունեցող անձինք (ՔԱԱ)՝ բարձրաստիճան հանրային պաշտոններ զբաղեցնող կամ զբաղեցրած անձինք են (ինչպիսիք են՝ օտարերկրյա կամ տեղի պետական պաշտոնյաները, պետական մասնակցությամբ կազմակերպությունների ավագ ղեկավարությունը, քաղաքական գործիչները կամ հիմնական քաղաքական կուսակցությունների ակնառու գործիչները, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներն ու այլ փոխկապակցված անձինք): Բոլոր աշխատակիցները պետք է տեղյակ լինեն ՔԱԱ հաճախորդ ունենալու հնարավոր հետևանքների մասին: ՔԱԱ, ի սկզբանե ունեն ՓԼ/ԱՖ բարձր ռիսկ, քանի որ իրենց ազդեցիկ դիրքը կամ ֆինանսական վիճակը նրանց՝ կոռուպցիայի և կաշառակերության առումով դարձնում են զգայուն:

Չնայած, Էբուրիթի Էյ Էմ չի վարում ՔԱԱ նկատմամբ ուղղակի արգելման քաղաքականություն, այդուհանդերձ ՔԱԱ-ի հետ գործարար հարաբերություն կարող է հաստատվել միայն ՓԼՉՊ կողմից հավելյալ պատշաճ ուսումնասիրությունն ավարտելուց հետո: Բոլոր ՔԱԱ ենթակա են հավելյալ ուսումնասիրության:

➤ **Կորպորատիվ հաշիվները. Բարդ կառուցվածքը և <<կեղծ>> (“shell”) ընկերությունները**

ՕՖշորային հարկային դրախտում գրանցված կամ իրավաբանական անձանց բարդ կառուցվածք ունեցող ընկերությունները կամ օրինական առևտրային կազմակերպությունների կողմից ղեկավարվող մասնավոր կազմակերպությունները (<<կեղծ>> ընկերությունները) կրում են՝ փողերի լվացման համար որպես մեխանիզմներ օգտագործվելու մեծ ռիսկ: Հաճախորդների պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերում սահմանված հավելյալ պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերը կիրառվում են՝ ընկերության իրավական գոյությունը, նպատակները, իրական շահառուներին ամբողջությամբ նույնականացնելու համար:

10.5 Պատժամիջոցները ստուգելու մեր մոտեցումը

Բազմաթիվ երկրներ և միջազգային մարմիններ կազմում են պատժամիջոցների ցանկեր, որում այն անձանց կամ կազմակերպությունների տվյալներն են, որոնք արգելված են տվյալ երկրում կամ համարվում են փողերի լվացողներ, ինչպես նաև արգելքի (Էմբարգո) ենթակա երկրների ցանկերը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, ԱՄՆ արտաքին ակտիվների վերահսկման գրասենյակի (OFAC)-

equiti

ի, Մեծ Բրիտանիայի և ԵՄ պատժամիջոցների ռեժիմները բացարձակ են, և այս դեպքերում ռիսկերի վրա հիմնված մոտեցում չի թույլատրվում կիրառել: Համոզվելու, որ Էքուիթի Էյ ԷՄ-ը որևէ հարաբերություն չի հաստատում որևէ նման անձի կամ կազմակերպության հետ, բոլոր հնարավոր հաճախորդները պետք է ստուգվեն գործարար հարաբերությունների հաստատելու պահին, իսկ այնուհետ՝ օրական:

10.6 Հաճախորդի գործունեության մոնիտորինգը

Հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելիս կարևոր է, որպեսզի նրա գործունեությունը ստուգվի՝ կասկածելի գործարքներ կամ փոխանցումներ նույնականացնելու նպատակով (այսինքն՝ նրանք որոնք «նորմալ» գործունեությունից դուրս են) կամ անել այն, երբ նրանց բնութագրող ՓԼ ռիսկի աստիճանը փոխվում է:

Հաճախորդի գործունեության ընթացիկ մոնիտորինգը Էքուիթի Էյ ԷՄ-ի ՓԼ դեմ պայքարի ուղղված ռիսկերի վրա հիմնված մոտեցման կարևոր մասն է: Էքուիթի Էյ ԷՄ-ի վճարհաշվարկային գործառույթներ իրականացնող միավորները պետք է ստուգեն նրանց կողմից կամ նրանց միջոցով կատարված բոլոր վճարումները՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման մասին վկայող անսովոր կամ կասկածելի գործարքները հայտնաբերելու համար: Բոլոր աշխատակիցները, հատկապես հաճախորդի հետ վաճառքով զբաղվողները կամ վճարումներն սպասարկողները պետք է առավել ուշադիր լինեն և անսովոր կամ կասկածելի ցանկացած գործարքի մասին տեղեկացնել իրենց անմիջական ղեկավարին կամ Համախառնասխանության դեպարտամենտին:

10.7 Վճարումները

Գործող հաճախորդները նույն հավանականությամբ կարող են ընդգրկված լինել փողերի լվացման մեջ, ինչպես նոր հաճախորդները և նրանք, որպես կանոն, առավել պրոֆեսիոնալ են և ավելի հմտորեն կփորձեն թաքցնել հանցագործության հետքերը: Օրինակ, սկզբում կարող են դրսևորել նորմալ վարքագիծ և հետագայում աստիճանաբար փոխել իրենց վարքագիծը, երբ ընկերությունում իրենց ավելի <<հարմար>> սկսեն զգալ: Որպես այլընտրանք, գոյություն ունեցող առևտրային հաճախորդների սեփականատերերը կարող են փոխվել և վերակազմակերպման գործընթացում կազմակերպությունը փոխանցել մեկ այլ անձի, ով ներգրավված է փողերի լվացման մեջ:

Հաճախորդներին և ընկերությանը պաշտպանելու նպատակով, Էքուիթի Էյ ԷՄ-ի աշխատակիցները պետք է մշտապես պահեն վճարման հետ կապված նվազագույն հետևյալ պահանջները՝

- Վճարումները սովորաբար չեն ընդունվում կամ կատարվում երրորդ կողմին,
- Վճարումները հնարավորինս պետք է վերադարձվի այն հաշվին որտեղից այն ուղարկվել է,
- Նախքան որևէ փոխանցում կատարելը ստուգեն, արդյոք բանկային հաշիվը պատկանում է սովյալ հաճախորդին,
- Չընդունեն կանխիկ գումարներ (թղթադրամներ կամ մեդաղադրամներ) որևէ ձևով,

equiti

անկախ նրանից՝ դրանք ստացվում են ուղղակի ընկերության գրասենյակում, թե անուղղակի՝ իր բանկային հաշվին փոխանցելով,

- Չեկն ընդունել միայն՝ չմարված պարտքը մարելու հետ կապված,
- Արգելել որևէ ձևով կանխիկ գումարի դուրս բերում,
- Արգելել հաճախորդներին կամ այլ անձանց օգտագործել Ընկերությունը որպես բանկ,
- Չընդունել այնպիսի բանկերի միջոցով կատարված վճարումները, որոնք ունեն բացասական վարկանիշ կամ գտնվում են այնպիսի իրավակարգավորման ներքո, որոնք ՓԼ/ԱՖ դեմ պայթարի տեսանկյունից չեն ենթարկվում պատշաճ կարգավորման ու վերահսկողության, ինչպես նաև գրանցված են, գտնվում կամ գործում են չհամապատասխանող երկրում կամ տարածքում:

Վերոնշյալ պահանջներից բացառությունները պարտադիր ուսումնասիրվում և հաստատվում են համապատասխանաբար՝ Ընկերության ավագ ղեկավարության և Համապատասխանության դեպարտամենտի կողմից:

10.7.1 Երրորդ կողմի վճարումները

Երրորդ կողմին կամ կողմից վճարումների կատարելու պահանջները սովորաբար ծագում են միջոցների նկատմամբ սեփականությունը փոխանցելու հետ կապված: Կարևոր է, որպեսզի բոլոր երրորդ կողմի վճարումները խստորեն վերահսկվեն և էքզիթի էյ Էմ-ը, սովորաբար իր գործունեությունում, չի ընդունում կամ չի կատարում երրորդ կողմին վճարումներ: Հասկանալի է, որ բացառիկ դեպքերում կարող են առաջանալ երրորդ կողմին վճարումներ կատարելու կամ ընդունելու օրինական գործարար պահանջ (օրինակ՝ պարտքի մարում): Նման դեպքերում, պետք է պահվեն հետևյալ պայմանները՝

- Երրորդ կողմը՝ հանդիսանում է ՀՀ ԿԲ-ի (կամ օտարերկրյա համարժեք մարմնի) կողմից կարգավորվող ընկերություն կամ մասնագիտական մարմնի կողմից կարգավորվող իրավաբանական գրասենյակ,
- Գոյությունի ունի հստակ առևտրային հիմնավորում՝ տվյալ պահանջի վերաբերյալ (բիզնեսի կողմից սահմանված) և գոյություն չունեն համապատասխանության, փողերի լվացման կամ լայն առումով՝ ֆինանսական հանցագործության վերաբերյալ ենթադրյալ մտահոգություն,
- Նախքան փոխանցումներ կատարելու կամ ընդունելու վերաբերյալ որոշում կայացնելը, երրորդ անձանց վերաբերյալ պետք է անցկացվեն բոլոր համապատասխան պատշաճ ուսումնասիրությունները:

Երրորդ կողմին կատարվող կամ ստացվող բոլոր վճարումները թույլատրվում է կատարել՝ նախապես՝ տեղի համապատասխան ավագ ղեկավարի գրավոր թույլտվությամբ՝ Համապատասխանության դեպարտամենտի վերջնական հաստատումից հետո:

eQUITI

10.8 Կասկածելի արարքների վերաբերյալ հաշվետվություններ կայացնելը

Գործող օրենսդրության համաձայն բոլոր աշխատակիցները պարտավոր են զգոնություն դրսևորել այն արարքների կամ վարքագծի նկատմամբ, որոնք կարող են վկայել փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման մասին: Այդ վերաբերում է նաև Ընկերության աշխատակիցների մոտ՝ մյուս աշխատակիցների վերաբերյալ առկա մտահոգություններին կամ կասկածներին, ովքեր դիտավորյալ անտեսում սույն Քաղաքականությամբ իրենց վրա դրված պարտականությունները:

Կասկածելի վարքագիծ նկատելու դեպքում, աշխատակիցները պետք է անմիջապես այդ մասին տեղեկացնեն իրենց անմիջական ղեկավարին և Համապատասխանության դեպարտամենտին: Որևէ պարագայում, նրանք չպետք է հաճախորդին հայտնեն իրենց կասկածների մասին:

Հաճախորդի այն գործարքները կամ գործողությունը որոնք համարվում են անսովոր կամ կասկածելի, պետք է անհապաղ ուսումնասիրվեն և գնահատվեն Համապատասխանության դեպարտամենտի կողմից՝ համապատասխան գործողությունների ծրագիր կազմելու համար: Այն ներառում է, բայց և չի սահմանափակվում հետևյալ մեկ կամ մի քանի գործողություններով՝

- Կասկածի մասին հաշվետվություն ներկայացնել իրավասու մարմիններին,
- Դադարեցնել գործարար հարաբերությունը,
- Պահանջել լրացուցիչ տեղեկություններ կամ «ճանաչիր քո հաճախորդի» վերաբերյալ փաստաթղթեր՝ փորձելով նվազեցնել մտահոգությունները,
- Շարունակել գործարար հարաբերությունները՝ հավելյալ ուսումնասիրություններ անցկացնելով,
- Հետագայում ոչինչ չանել:

Գործող օրենքների և կարգավորումների համաձայն, Էքուիթի Էյ Էմ-ը կասկածելի բոլոր արարքների համար պետք է հաշվետվություն ներկայացնի ՀՀ ԿԲ ֆինանսական դիտարկումների կենտրոնին (+374 10 592 697 or www.cba.am)՝ վերլուծության ավարտից հետո հնարավորին սեղմ ժամկետում: Կոնկրետ արարքի կամ փոխանցման կասկածելիության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու հարցի որոշումը վերապահված է Համապատասխանության դեպարտամենտին, և վերջնականապես՝ ՓԼՀԴ-ին:

11. Դերակատարումներն ու Պարտականությունները

Բոլոր աշխատակիցները կարևոր դեր ունեն ընկերության ՓԼԱՖ դեմ պայթարի կառուցակարգում ապահովելով, որպեսզի Ընկերությունը չենթարկի անհարկի ՓԼ ռիսկի: Էքուիթի Էյ Էմ-ի ՓԼ/ԱՖ դեմ

equiti

պայթարի կառուցակարգը սահմանվում և ներդրվում է ՓԼՀՊ-ի կողմից, կամ այնուհետ Շնկերության կողմից դրանք իրականացվում են համապատասխան քաղաքականությունների և ընթացակարգերի ձևով:

Պատասխանատու Անձինք	Պարտավորություն
ՓԼՀՊ	<ul style="list-style-type: none"> • Հիմնականում պատասխանատու է՝ խորհրդին (կամ Գործադիր տնօրենին՝ տնօրենների խորհրդի բացակայության դեպքում) ֆինանսական հանցագործությունների կանխարգելման համար անհրաժեշտ կառուցակարգերի հաստատման ու ղեկավարման հետ կապված խորհրդատվություն տրամադրելու հարցերով, • Ապահովել, որպեսզի ՓԼ դեմ պայթարի կառուցակարգն արդյունավետ, համաչափ ու կենսունակ լինի ոլորտի ՓԼ ռիսկերին, • Տնօրենների խորհրդին (կամ Գործադիր տնօրենին՝ տնօրենների խորհրդի բացակայության դեպքում) հաշվետվություն ներկայացնել ՓԼ դեմ պայթարի հետ կապված բոլոր հարցերի վերաբերյալ, • Տարեկան գրավոր հաշվետվություն ներկայացնել խորհրդին (կամ տնօրենին՝ տնօրենների խորհրդի բացակայության դեպքում) ՓԼ դեմ պայթարի համակարգերի և վերահսկողության միջոցների արդյունավետության վերաբերյալ, • Ապահովել, որ ողջ անձնակազմն անցնի ՓԼ վերաբերյալ թեմաներով թրեյնինգներ, • ՓԼ հետ կապված խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրել ընկերությանը, • Չգոն լինել՝ հավանական կասկածելի վարքագիծը նույնականացնելու հետ կապված, • Տեղյակ լինել՝ ՓԼ-ի հետ կապված գործող հայկական և միջազգային օրենքներին, կարգավորումներին ու ուղեցույցներին, • Ուսումնասիրել հավանական կասկածելի արարքները և անհրաժեշտության դեպքում հաշվետվություն կազմել ու cba.net ուղիղ կապի միջոցով՝ ներկայացնել համապատասխան մարմիններին, գիտակցելով, որ դա՝ ՓԼՀՊ-ի ինքնուրույն գործառույթն է և որևէ կասկածելի վարքագծի մասին հաշվետվություն ներկայացնելը թողնված է իր լիարժեք հայեցողությանը:
Տնօրենների խորհուրդը (կամ գործադիր տնօրենը՝ տնօրենների խորհրդի բացակայության դեպքում).	<ul style="list-style-type: none"> • Հաստատել ՓԼ դեմ պայթարի քաղաքականությունը, հաճախորդների պատշաճ ուսումնասիրության ընթացակարգը և դրա հետ կապված այլ քաղաքականությունները ու ներքին իրավական ակտերը, • Իրազեկված լինել՝ Հայաստանի ՓԼ դեմ պայթարի մասին օրենքներով և կարգավորումներով սահմանված իր պարտավորությունների մասին, ինչպես անհատական այնպես էլ էթոկիթի էյ Էմ-ի մակարդակում,

equiti

	<ul style="list-style-type: none"> • Էքուիթի Էյ Էմ-ում ձևավորել լավագույն փորձի, վարքագծի և բիզնես գործունեությանը խթանող մշակույթ, • Քննարկել ՓԼՊ-ի կողմից բարձրացված հարցերը, ներառյալ Ներքին Դիտարկման մարմնի տարեկան ծրագրերը և գործել դրանց համապատասխան, • Սահմանել աշխատակիցների իրավունքներն ու պարտականությունները, • Կազմակերպել անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովածությունը, • Նշանակել և պաշտոնից ազատել ՓԼՊ-ին:
<p>Ավագ Ղեկավարություն</p>	<ul style="list-style-type: none"> • Իրազեկված լինել Չայաստանի ՓԼ դեմ պայքարի մասին օրենքներով և կարգավորումներով սահմանված իր պարտավորությունների մասին, ինչպես անհատական այնպես էլ Էքուիթի Էյ Էմ-ի մակարդակում, • Համապատասխանել սույն Քաղաքականությանը և տեղյակ լինել Էքուիթի Էյ Էմ-ի ՓԼ դեմ պայքարի հիմնական սկզբունքներին, • Տեղյակ լինել և գնահատել իրենց գործառույթների շրջանում ծագող հավանական ՓԼ ռիսկերը, • Առանձնացնել և ՓԼ հետ կապված բոլոր հարցերն ուղղել Համապատասխանության դեպարտամենտին, • Ապահովել իր անձնակազմի իրազեկվածությունը՝ համոզված լինելով, որ անձնակազմը ՓԼ վերաբերյալ թեմաներով համապատասխանաբար վերապատրաստվել է, ինչպես նաև առանձնացնել այն աշխատակիցներին ովքեր ունեն լրացուցիչ ՓԼ/ԱՖ թրեյնինգի կարիք:
<p>Ներգրավում (Onboarding)</p>	<ul style="list-style-type: none"> • Իրազեկված լինել Չայաստանի ՓԼ դեմ պայքարի մասին օրենքներով և կարգավորումներով սահմանված պարտավորությունների մասին, ինչպես անհատական այնպես էլ Էքուիթի Էյ Էմ-ի մակարդակում, • Համապատասխանել սույն Քաղաքականությանը և տեղյակ լինել Էքուիթի Էյ Էմ-ի ՓԼ դեմ պայքարի հիմնական սկզբունքներին, • Ապահովել, որպեսզի հաճախորդները ներգրավեն՝ սույն Քաղաքականությամբ և Հաճախորդների պատշաճ ուսումնասիրության ընթացակարգերով սահմանված պահանջներին համապատասխան, • Չգոն լինել՝ հավանական կասկածելի վարքագիծը նույնականացնելու հետ կապված, • Կասկածների մասին հայտնել իր անմիջական ղեկավարին և Համապատասխանության դեպարտամենտին:
<p>Վճարումները/Բեկ Գրասենյակ (Back office)</p>	<ul style="list-style-type: none"> • Իրազեկված լինել Չայաստանի ՓԼ դեմ պայքարի մասին օրենքներով և կարգավորումներով սահմանված պարտավորությունների մասին, ինչպես անհատական այնպես էլ Էքուիթի Էյ Էմ-ի մակարդակում, • Համապատասխանել սույն Քաղաքականությանը և տեղյակ լինել Էքուիթի Էյ Էմ-ի ՓԼ դեմ պայքարի հիմնական սկզբունքներին,

equiti

	<ul style="list-style-type: none"> • Լուծման համար վճարումների հետ կապված ցանկացած հարց և առարկություն ներկայացնել անմիջական ղեկավարին, • Համակարգել որևէ վճարման առանձնահատկությունների մասին ղեկավար հաստատումները, • Չգոն լինել՝ հավանական կասկածելի վարքագիծը նույնականացնելու հետ կապված, • Կասկածների մասին հայտնել իրենց անմիջական ղեկավարին և Համապատասխանության դեպարտամենտին:
<p>Վաճառքի պատասխանատուներ</p>	<ul style="list-style-type: none"> • Իրազեկված լինել՝ Հայաստանի ՓԼ դեմ պայքարի մասին օրենքներով և կարգավորումներով սահմանված պարտավորությունների մասին, ինչպես անհատական այնպես էլ էթոիթի Եյ Էմ-ի մակարդակում, • Համապատասխանել սույն Քաղաքականությանը և տեղյակ լինել էթոիթի Եյ Էմ-ի ՓԼ դեմ պայքարի հիմնական սկզբունքներին, • Լուծման համար հաճախորդի սպասարկման հետ կապված ցանկացած հարց և առարկություն ներկայացնել անմիջական ղեկավարին, • Չգոն լինել՝ հավանական կասկածելի վարքագիծը նույնականացնելու հետ կապված, • Կասկածների մասին հայտնել իրենց անմիջական ղեկավարին և Համապատասխանության դեպարտամենտին:
<p>Այլ աշխատակիցներ</p>	<ul style="list-style-type: none"> • Իրազեկված լինել՝ Հայաստանի ՓԼ դեմ պայքարի մասին օրենքներով և կարգավորումներով սահմանված պարտավորությունների մասին, ինչպես անհատական այնպես էլ էթոիթի Եյ Էմ-ի մակարդակում, • Համապատասխանել սույն Քաղաքականությանը և տեղյակ լինել էթոիթի Եյ Էմ-ի ՓԼ դեմ պայքարի հիմնական սկզբունքներին, • Չգոն լինել՝ հավանական կասկածելի վարքագիծը նույնականացնելու հետ կապված, • Կասկածների մասին հայտնել իրենց անմիջական ղեկավարին և Համապատասխանության դեպարտամենտին:

12. Թրեյնինգը

ՓԼ/ԱՖ վերահսկման ամենակարևոր մասերից են աշխատակիցները և ըստ այդմ, նրանց թրեյնինգն ունի առաջնային նշանակություն: Էթոիթի Եյ Էմ-ի անունից գործառույթներ իրականացնող բոլոր աշխատակիցներն անցնում են համապատասխան թրեյնինգներ ապահովելու որպեսզի նրանք՝

- Իրազեկ լինեն փողերի լվացման և ահաբեկության ֆինանսավորման ռիսկերին, համապատասխան օրենսդրությանը և իրենց պարտականություններին,
- Ճանաչեն ՓԼՀԴ-ին և նրա պարտականությունները,
- Տեղյակ լինեն, թե ինչպես նույնականացնել և պայքարեն հավանական փողերի լվացման

equiti

կամ ահաբեկչության ֆինանսավորման գործարքների կամ արարքների դեմ,

- Տեղյակ լինեն հաշվետվություն ներկայացնելու հետ կապված իրենց պարտականություններին,
- Գիտակցեն վարկանիշին պատճառվող այն էական վնասը, որը կարող է առաջանալ փողերի լվացման դեպքերի հետ Էքուիթի Էյ Էմ-ի ցանկացած առնչությունից:

Թրեյնինգները կարող են տարբեր ձևի լինել՝ գործառույթային տարբերություններով պայմանավորված: Այնուամենայնիվ, Էքուիթի Էյ Էմ-ի հիմնական պահանջն է, որ ամբողջ անձնակազմն անցնեն տվյալ տարվա համար նախատեսված ՓԼ դեմ պայթարի թեմաներով առցանց թրեյնինգներ՝ նշված մեկ ամսյա ժամկետներում: Սահմանված ժամկետում առցանց թրեյնինգը չանցնելը կհամարվի, որպես կարգապահական հարց, ինչը կարող է հանգեցնել կարգապահական ներգործության: Որոշ աշխատակիցներ և դեպարտամենտներ, օրինակ Բեկ-գրասենյակը, հաճախորդների սպասարկող թիմերը կարող են տարեկան լրացուցիչ անցնել ֆինանսական հանցագործությունների վերաբերյալ առկա թրեյնինգներ: Ընկերության պարտավորություն է ապահովել, որպեսզի իր ողջ անձնակազմը պատշաճ ձևով վերապատրաստվի իրենց վրա տարածվող ՓԼ/ԱՖ դեմ պայթարի ընթացակարգերի վերաբերյալ և որոշելու, արդյոք լրացուցից թրեյնինգներ անցնելու անհրաժեշտության հարցը:

13. Տեղեկատվության պահպանումը

<<Փողերի լվացման դեմ պայթարի մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն, Էքուիթի Էյ Էմ-ը պետք է համապատասխանի տեղեկությունների պահպանման վերաբերյալ սահմանված պահանջներին և ըստ այդմ, պարտավոր է պահել՝

- Հաճախորդի նույնականացման վերաբերյալ ստացված ապացույցները, հղումները, պատճենները՝ գործարար հարաբերության ավարտից հետո առնվազն 5 տարի,
- Հաճախորդի գործարքների վերաբերյալ տվյալները՝ գործարքի կատարումից հետո՝ առնվազն 5 տարի,
- Ներքին և արտաքին կասկածների մասին հաշվետվությունների հետ կապված ձեռնարկված գործողությունների վերաբերյալ տվյալները,
- Ներքին հաշվետվության այն տվյալները, որոնք ՓԼՀՊ գտնում է որ պետք է պահել՝ արտաքին հաշվետվություն կազմված չլինելու դեպքում:

Բացի այդ, Էքուիթի Էյ ԷՄ-ը պետք է ունենա տեղեկությունների պահման համապատասխան համակարգեր, և պահանջելու դեպքում (օրինակ՝ ՀՀ ԿԲ-ի կողմից) ժամանակին հասանելի դարձնի այդ տեղեկությունները:

14. Քաղաքականության վերանայումը և հաստատումը

equiti

Համապատասխանության դեպարտամենտի պարտականությունն է յուրաքանչյուր տարի կամ կարգավորող նորմատիվ ակտերում էական փոփոխություններից հետո (որքան հնարավոր է շուտ) վերանայել, թարմացնել և շրջանառել այս փաստաթուղթը: Քաղաքականության նոր խմբագրությամբ վերջնական հաստատվում կամ դրանում զգալի փոփոխություններ կարատավում են էքզիթիվի ԷՅ ԷՄ-ի Տնօրենների խորհրդի կողմից (կամ Գործադիր տնօրենի՝ տնօրենների խորհրդի բացակայության դեպքում):

15. Խախտման հետևանքները

Սույն քաղաքականության ցանկացած խախտում գնահատվում է որպես կարգապահական լուրջ խնդիր և քննարկման ու լուծման է ենթակա էքզիթիվի ԷՅ ԷՄ-ի կարգապահական ընթացակարգի համաձայն: Բացի այդ, խմբի քաղաքականությունների և ընթացակարգերի խախտումները, կդիտվեն որպես կոպիտ խախտում, որոնք կարող են հանգեցնել ընդհուպ աշխատանքային հարաբերությունների դադարեցմանը՝ առաջացնելով կարգապահական, քաղաքացիական կամ քրեական պատասխանատվություն:

Սույն քաղաքականության բոլոր խախտումների մասին պետք է տեղյակ պահել Համապատասխանության դեպարտամենտին՝ նույնականացնելուց հետո հնարավորինս շուտ ողջամիտ ժամկետում:

equiti

Հավելված. փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի խախտումների համար սահմանված պատժամիջոցների ցանկ.

1. «Փողերի լվացման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի համաձայն

ա/ Հաշվետվություններ կայացրած կազմակերպությունները կարող են ենթարկվել ֆինանսական պատասխանատվության հետևյալ ստորև նշված իրավախախտումների համար, եթե այլ օրենքներով և կարգավորումներով՝ օրենքների և իրավական այլ ակտերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար այլ պատժամիջոցներ սահմանված չեն՝

No	Փողերի լվացման դեմ պայքարի խախտումները	Պատիժներ
1)	Ռիսկերի վրա հիմնված մոտեցում չկիրառելը առաջացնում է	Նախազգուշացման հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձ 200-պատիկի չափով (200,000 դրամ)։
2)	Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն չտրամադրելը (ներառյալ օրենքով սահմանված դեպքերում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելը) կամ ուշ ներկայացնելն առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 600-պատիկի չափով (600,000 դրամ)։
3)	Պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի վերաբերյալ սահմանված հաշվետվությունները չտրամադրելը (ոչ կանխիկ գործարքների համար նախատեսված շեմը՝ 20 միլիոն դրամ է, իսկ կանխիկ գործարքների դեպքում՝ 5 միլիոն դրամը) կամ ժամկետանց տրամադրելը, ինչպես նաև սահմանված հաշվետվությունների մեջ տվյալները սխալ (այդ թվում՝ կեղծ կամ ոչ արժանահավատ) կամ թերի լրացնելը, հաստատված հաշվետվական ձևը կառուցվածքային փոփոխությունների ենթարկելն առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 200-պատիկի չափով (200,000 դրամ)։
4)	<<Կասկածների չբացահայտման>> և գաղտնիության պահանջները խախտելը (Հաշվետվություն տրամադրող անձի, նրա աշխատակիցների և ներկայացուցիչների կողմից՝ այն անձին, որի	Նախազգուշացման հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի

equiti

	վերաբերյալ հաշվետվություն կամ այլ տեղեկություններ են տրամադրվում լիազոր մարմին, ինչպես նաև այլ անձանց հաշվետվության կամ այլ տեղեկությունների տրամադրման փաստի մասին հայտնելու արգելքը չպահպանելը կամ ոչ պատշաճ պահելը) առաջացնում է	600-պատիկի չափով (600,000 դրամ)։
5)	Գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակվելու կամ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն լիազոր մարմին չտրամադրելու դեպքում, գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու հիմնավորումները, կատարված եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորելու ու պահպանելու համար սահմանված պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը առաջացնում է	Նախագգուշացման հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 300-պատիկի չափով (300,000 դրամ)։
6)	Ֆինանսական հաստատությունների՝ լիազոր մարմնում սահմանած կարգով չհաշվառվելը առաջացնում է	Նախագգուշացման հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 200-պատիկի չափով (200,000 դրամ)։
7)	Կարգավորող մարմնի պահանջով տեղեկություններ չտրամադրելը կամ հանձնարարականները չկատարելը առաջացնում է	Նախագգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 600-պատիկի չափով (600,000 դրամ)։
8)	Չանախորդի պատշաճ ուսումնասիրություն (ՀՊՈԻ) չկատարելն առաջացնում է	Նախագգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 600-պատիկի չափով (600,000 դրամ)։
9)	Գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրության չկատարելը առաջացնում է	Նախագգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում

equiti

		կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 200-պատիկի չափով (200,000 դրամ)։
10)	Հաճախորդի՝ ռիսկերի վրա հիմնված պատշաճ ուսումնասիրության առանձնահատկություններով պայմանավորված միջոցառումները չկատարելը առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 200-պատիկի չափով (200,000 դրամ)։
11)	Հաշվետվություն տրամադրող անձի՝ արտասահմանյան երկրներում և տարածքներում գործող մասնաճյուղերին և ներկայացուցչություններին ներկայացվող պահանջներին չհամապատասխանելը առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 600-պատիկի չափով (600,000 դրամ)։
12)	Տեղեկությունների պահպանման սահմանված պահանջները չպահպանելն առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 600-պատիկի չափով (600,000 դրամ)։
13)	Հաշվետվություն տրամադրող անձի՝ ՓԼ դեմ պայթարին վերաբերող ներքին իրավական ակտերը (քաղաքականություններ, կանոններ, կարգավորումներ, ընթացակարգեր, հանձնարարականներ և այլն) չսահմանելը ու չկիրառելը առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 200-պատիկի չափով (200,000 դրամ)։
14)	Ներքին դիտարկումների մարմին չունենալը առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 600-պատիկի չափով (600,000 դրամ)։

equiti

15)	առևդիտ պատշաճ ձևով չիրականացնելը առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 200-պատիկի չափով (200,000 դրամ)։
16)	Կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման սահմանված պահանջները չկատարելն առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 600-պատիկի չափով (600,000 դրամ)։
17)	Գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման կամ դադարեցման պահանջները չկատարելը առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 600-պատիկի չափով (600,000 դրամ)։
18)	Ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի սառեցման պահանջները չկատարելը առաջացնում է	Նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարականի հայտնում կամ տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի 2 հազ-պատիկի չափով (2 միլիոն դրամ)։

բ/ Փողերի լվացման մեջ իրավաբանական անձ հանդիսացող հաշվետվություն տրամադրող անձի ներգրավված լինելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկի չափով(5 միլիոն դրամ), ինչպես նաև կարող է ուժը կորցրած ճանաչվել կամ կասեցվել կամ դադարեցվել այդ անձի լիցենզիան կամ հայց ներկայացվել դատարան՝ օրենքով սահմանված կարգով այդ իրավաբանական անձին լուծարելու պահանջով։

գ/ Ահաբեկչության ֆինանսավորման մեջ իրավաբանական անձ հանդիսացող հաշվետվություն տրամադրող անձի ներգրավված լինելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի քսանհազարապատիկի չափով (20 միլիոն դրամ), ինչպես նաև ուժը կորցրած է



ճանաչվում կամ դադարեցվում է այդ անձի լիցենզիան կամ հայց է ներկայացվում դատարան՝ օրենքով սահմանված կարգով այդ իրավաբանական անձին լուծարելու պահանջով:

2. ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն

1. Փողերի լվացման մեջ մեղավոր ճանաչված անձն ենթակա է քրեական պատժի ազատազրկման ձևով 2-ից 5 տարի ժամկետով՝

1.1 Նույն արարքը, որը կատարվել է խոշոր չափերով (*որը համարվում է 5 միլիոնը գերազանցող գումարը*) կամ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ պատժվում է ազատազրկմամբ 5-ից 10 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

1.2 Նույն արարքը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով (*որը համարվում է 5 միլիոնը գերազանցող գումարը*) կամ կազմակերպված խմբի կողմից կամ պաշտոնական դիրքն օգտագործելով պատժվում է ազատազրկմամբ 6-ից 12 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Ահաբեկչության ֆինանսավորման մեջ մեղավոր ճանաչված անձը պատժվում է ազատազրկման 3-7 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա.

1.3 Նույն արարքը, որը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից պատժվում է ազատազրկմամբ՝ 8-ից 12 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա: